



## ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԲԱԶՄԱՎԵՊ

Բ. — ԲԱՐԻ ՈԳԻՔ. Հրեշտակ. Մեղեք աղեկներ. Սրբաբանաբաններ. Գ. — ԶԱՐ ՈԳԻՔ. Զարն. Ստամակ. Դեղ. Վատր. Սյու. Ստամակ. Թոք. Խառ. Զիշար. Թար. Սյու. Սրբաբան տեղիք. Սրբա. Գրող. Խառ. Զարեան. Զեմն.

(Տես յ'էջ 433)

Բ. ԲԱՐԻ ՈԳԻՔ. — Ճշմարտութեամբ գերազանց քան զմարդիկ և (անհամեմատ) ստուրին քան զԱստուած կան հոգեղէն էակք, որք թէ ամէն կրօնից մէջ ճանչցուած. Հրեից և քրիստոնէից մէջ ծանօթը՝ Հրեշտակ առնուամբ, նոյնպէս քիչ շատ այլալուծեամբ կարծեաց ի մանսէտականաց և յայլ միաստուածեայց, նա և ի բազմաստուածեայց ու մահնց։ Մեր սուրբ կրօնքն ճանչցընէ զՀրեշտակս աննիւթ հոգիս, միջնորդս իմն ընդ Աստուած և ընդ մարդ, պաշտօնեայս Աստուծոյ՝ իր կամքն՝ հրամանները կատարելու յերկրի վրան մարդկան, պաշտպանելու զանոնք ի չար Ոգաց և ի վատնագաց, և երբեմն եւս զերկուքն այլ պատժելու։ Ինչպէս իրենց էութեան՝ այսպէս այլ իրենց զօրութեան և զործող վրայօք՝ հեթանոսք այլեւայլ և օտարաւոր կարծիք և զրոյց ունին. մեր քրեշտակիքն մեր ազգին նկատմամբ է, բայց յայտնի ծանօթութիւն չունիմք, թէ ի՞նչ և ո՞րչափ հաւատք ունէին հին Հայք այսպիսի հոգաց, ի՞նչպէս զանազանէին ուրիշ կարծեալ բարի ոգիներէն, թէ ասոնք միայն էին իրենց Հրեշտակ համարելի։ Ինչ որ ըլլայ՝ քննական և նշանական է անունն իսկ Հրեշ-

տակ, զոր և հարկ է համարել քրիստոնէութենէ առաջ ծանօթ յազգիս. մանաւանդ որ պարսկերէն այլ է նոյն անունն, ֆերիշթ քաշ, որ ստուգաբանի իրենց լեզուաւ թեւարձակ (ֆէր-հիշթէ), և յարմար է հասարակօրէն իրենց ընծայուած գաղափարին, այսինքն միշտ թեւաւոր նկարակերպելու. նշանաւոր է և մեր մէջ բառին նուազական կամ զգուական վերջաւորութիւնն Հրեշտակ. և ինչպէս շատ բառեր կան հասարակ երկու ազգացս եւս (Հայոց և Պարսից) և չեմք կրնար ըսել և որոշել թէ ո՞րն ի միւսէն առած է, հարկ է որ երկուքէն այլ շատ ի հնուց զործածուած ըլլայ, զուցէ և յառաջ քան զազանոց Չանդիկի, վրան զի այսոր մէջ չկայ այդ անունն։ Մեր հին ձեռագրաց մէջ դրօշի եւս Հրաշտակ. որ ի՞նչ սեփական համարուէր հայ լեզուի՝ հրաշ, զի հրեղէն համարել է կոչելն այլ զնա՝ քրիստոնէութենէ առաջ է։ Այսպիսի հայկական ենթադրութեամբ կրնար ի հոգի և եղտ բառից ստուգաբանիլ, որոց վերջինն թէ և չի գտուի առանձինն, բայց քննութեան կէտ մի կու տայ գառնշտ բառի՝ ձայնիւ և իմաստիւ այլ, որոյ մերձաւոր է մեր մէջ սովորական

եղած Հրեշտակաց կոչումն : Առաջնոյն (Հրե-  
դէն) համար կ'ըսեն Ս. Գիրքը (ի Սաղմոսս),  
« Ու արար զՀրեշտակս իւր հոգիս, և զՊաշ-  
» տօնեայս իւր ի քոց հրոյ » . ասոր համար  
և Յոգեդէնք եւս անուանին առ մեզ : Երկ-  
րորդին համար կ'ըսէ Եւրոպայի . « Չուար-  
» թուն կոչին Հրեշտակք, որ են անբուն ա-  
» կամք և լուրջ երեսօք » . Ըստ այսմ և  
Հսկող եւս անուանին : Սաղմոսին վկայութիւնն  
նշանելի է և պաշտօնեայ կոչմամբն, վասն զի  
այն է գլխաւոր զործ նոցա՝ ըստ մարդկան ծա-  
նօթութեանն և պիտոյից . և նոյն իսկ Հրեշտակ  
կոչումն այլ նշանակէ առ մեզ և պատգամա-  
ւոր կամ զհսպան . այսպէս կ'ըսեն և Պար-  
սիկք և Արաբացիք՝ տառից ինչ այլալու-  
թեամբ, փրիիւդէ . *دشمن* :

Քրիստոնեութեան մխիթարական հաւա-  
տաւեաց մէկ կէտն այլ է Հրեշտակաց պահ-  
պանութիւնն կամ խնամքն ի վերայ մարդկան  
և երկրի, և կարծուի որ ինչպէս անձինք՝  
այսպէս և խումբք մարդկան և արարածոց՝  
յատուկ պահպանիչ հրեշտակ ունենան : Այս  
հիման վրայ երեսցընեն Աղթարք և որդեն  
այլեւայլ երկրի մասանց այլ պահպաններ  
կամ իշխաններ . ինչպէս, Ռաֆայէ՝ ամէն  
չարէ պահող, Սաքիէ՝ Լեւանց . Սոքայէ՝  
Ջերմանց, Սարաքիէ՝ Երնդոց, Մաշա-  
նայէ՝ Մայրեաց . Յովիէ՝ Քնոյ . Արանայէ՝  
Մանկանց . Մեղվոս՝ Ջրոց . Կռետիոս՝ Արե-  
զական և Լուսնի . ուրիշ շատ խորթ անուամբ  
հրեշտակներ այլ, որոց 15 գլխաւորք՝ ըստ  
գրողին, « են չուրջ զամբողջն Աստուծոյ,  
» ամենեքեան զօրացողսն Հրեշտակք են և  
» ի ձեռին ունին զուրն . զհասնան և կայեն  
» զամենայն պեղծ և զչար դեմս » :

Թէ է ասոնք նոր դիւան և քրիստոնէական  
գաղափարով, բայց մեզ դեռ անհաւանական  
չերեւի որ և յառաջ քան զայն կային Հայոց  
մէջ անուանք և կարծիք Հրեշտակաց, թէ և  
մնացած չլլայ յիշատակ, կարծեմ թէ և  
բարի ու չար սղուց մէկ սկիզբէ առաջ զան  
(ինչպէս Հրեշտակաց և Դիւանց) ճանչցուած  
ըլլայ : Ետքինս՝ նման Յունաց Դեմոն,


Δαίμων, կոչուածոց իբրեւ պահպան կամ  
ազգարար հրեշտակք համարուէին, թերեւս  
ստորակարգք քան զամեն ի հրեշտակաց . ա-  
տոնց տեսակէն թուին ինչուան հիմայ ռամ-  
կաց մէջ յիշուած « Մեգիսէ աղէկմոր » ,  
հեթանոս հարց մնացեալ աւանդութեամբ, որք  
իբր ոչոքելով այնպէս կոչէին այն Ոգիները,  
որ իրենց փառ չհասցընեն : Ատոնց նմանք  
պիտի ըլլան և Ալէկ Մանուկ կոչուածքն,  
թէ չեն ֆաղքն . թեթեամբ ըստոյական  
պատմութեան մի մէջ կախարդ մի կ'ըսէ մե-  
կուն՝ զթալով . « Ու՛ր որդեակ, զա որ նեղէ  
» զքեզ՝ չէ դեւ, այլ Հողմ դիպառ քեզ », և  
կամ « Աղէկ մանուկ եհար զքեզ նախանձով » :  
Բժշկարան մ'այլ խելագարին զգաղմունքը  
բացատրելով՝ կ'ըսէ . կարծեն՝ թէ « Կու բըւ-  
նեն զիս Աղէկ Մանկտիք » : Աղթարական  
գրուած մ'այլ Չարակնին խոստովանել տայ,  
թէ « զԱղէկ մանուկն հայեմ . զաղայն ի մօր  
զերկն չարչարեմ » : Այս վկայութեամբք  
յայտնուի՝ որ թէ և անուամբ Աղէկ են այս  
մանուկ ոգիք, բայց շատ հեղ և չարածնիք :

Լաւագոյն ոգիք լաւագոյն և գեղեցիկ եւս  
անուամբ, նոյնպէս և տգեղութեանց մէջ գե-  
ղեցիկ ծնունդ հեթանոս Հայկազանց . մտայն՝  
են Յաւերժամարտունքն, կամ Յաւերժական  
հարստեք, թերեւս և զբարգոյն ցանկալիք քան  
զամեն գիւցականս օտար ազգաց, նա եւ քան  
զյուսկան Նիւսիֆայս, որք՝ ի թարգմանու-  
թեան այսպէս (Յաւերժահարսն) կոչուին, այլ  
ըստ կարծեաց՝ չեն նոյն ու նմանք անոնց :  
Անուամբ յայտնի իրենց սեռն, իբր հրեշտա-  
կունի ընծայելով . բնական կամ շրջած տե-  
ղերնին՝ բնութեան զուարճալի կողմանք,  
մարգեր, մայրիք, գետեղերք . կարողութեամբ՝  
Մուսայից նման գիտնականք, ինչպէս բա-  
ցատրեն հին մեկնիչք, թէ « բնութեամբ  
» ունին, ասեն, զգիտութիւն և ոչ ուսանե-  
» լով » : Ռամկաց կարծիք է թէ Յաւերժ-  
հարստեք յատուկ խնամող են իրենց սեռի  
մանկանց, սկսեալ ի հարսանեաց մինչեւ յեր-  
կուն և ի տղաբերս, նա եւ անոնց պըչ-

» Թիւն բարեգործ դիւանց՝ առ ի բարիք իմիք  
» հաստատութիւն . Կախարդութիւնն է մակա-  
» կոչութիւն դիւան չարագործաց » :

1 Նոննոս ի լուծմ . բանից Գր . Աստուածաբա-  
նի՝ մոգութեան համար կ'ըսէ, « է մակակոչու-

րանաց և լուսացմանց. որոց յիշատակաւ՝ ու մանք ի նոր բանասիրաց կ'ըսեն, թէ հիմայ այլ տեղ տեղ կանայք տարին երկու անգամ (ի զարնան և յաշնան) ուրախութեան հանդէս կատարեն ի բաղանիս. կան կարծողք որ երբեմն Յաւերժարարանց հետ արժանաւոր փեսայք՝ երիտասարդք 1 այլ կու շրջին, բայց երկուցն այլ մահկանացուք ըլլան։ Այսպէս համարի և Գր. Տաթեւացի. « Այլ եւս զոն » բանաւոր և մահկանացուք, որպէս Յաւերժ ժահարսունք. զորս ոմանք ասեն, այլ ոչ » են հանճարոյ ընդունակք »։ Նա եւ մեղադրէ զանոնք՝ որ դիւաց պէս « միշտ պատ-



Ի վան գոռաժ և ին պղնձեայք.

րեն զմարդիկ՝ տրախութեամբ »։ Իրմէ հնաւոյն մէկն այլ աղօթիւք խնդրէ. « Մի՛ ի ճիւղադեացն իշխել, կամ Յաւերժարարսնցն զօրել »։ Քիչ քիչ Յաւերժարարսունք այլ խաբեբայից և չարաց հետ զսաստրին. հին քարոզգիր մ'այլ յայտնապէս կ'ըսէ, « ազգ

1 Խորենացոյ նկարագրած Այրարատեան գաղաղ յիշել տան, ուր յարեւմտեց « զետոց հաւ » Լազրեմն եղեալ հեղաբար, առ սահմանօք նոցա՝ ծնիւք լեռամբք եւ եզերօք դաշտին, Պատաւ » նիք ոմանք իբր առ Երիտասարդոսնօք մեմիցին »։ — Խորեն յիշատակ եւ ի քննութիւն ընծայուած է այս պղնձեղէն իգակերպ քանդակն կամ ձուլածն, գտուած ի վան, որ թէ ոչ Յաւերժահարսն՝ այլ դիւցական անձ մի ներկայաջնէ։

են դիւաց »։ — Տաթեւացոյ քննորդին Առաքել եպիսկոպոս Սինեանց, տեղ մի ի Լուծմ. Մահմանաց Դաւթի Անյաղթի՝ առանց անուան այսպէս նորալուր մի աւանդէ Յաւերժարարսնց համար. « Ոմանք ասենք թէ » Քաջք են. և այսպէս ասեն, թէ յետ » Զրահդեղին՝ Նոյի որդի եղեւ Մանիստոն, » և այսպէս զուտար Աստղիկ անուն. և յոր » ժամ Աստուած եհարց զՆոյ՝ թէ այլ որդի » կամ զուտար ունի՞ս. և նա ամաչեցաւ, և » ասաց՝ թէ ոչ. յայնժամ երկու զուտարն և » որդին՝ Քաջք զարձան և աներեւոյթք եղեն. և վասն այն մահկանացու ասեն զնո » սա՝ որ ծնանին և մեռանին. և ոյ որ կու » տեսնէ զնոսա՝ հաւնապազ հարանիք և դափ » և զուսան տեսանեն. և բնական ունին » զգիտութիւն. այլ այս ոչ է ճշմարիտ բան »։ Ուրիշ տեղ այլ գրէ. « Յաւերժարարսունք՝ » ոչ են ընդունակ հանճարոյ, զի շունչ ոչ » ունին՝ որ ենթակայ լինի իմաստից. և » տես, զի գիտութիւն ունին, և զոր ինչ » գիտեն՝ անմոռանալի գիտեն, բայց այլ » ինչ ուսանել ոչ կարեն »։ — Բնածին զաղափարի վարդապետութիւն մի՛։ — Դարձեալ քանի մի տեղ այլ գրէ. « Գոն անե » ղեւոյթ արարածք կենդանիք, բնութեամբ » գիտունք անմոռանալիք. զի ոչ այլ ուսա » նել կարեն, և ոչ զոր գիտեն՝ մոռանալ » կարեն. են աներեւոյթք և մահկանացուք, » զոր Յաւերժարարսունք կոչեն »։ — « Յա » յերժարարսունքն և անբան կենդանիք՝ բը » նութեամբ ունին զգիտութիւն, և ոչ զայն » մոռանալ կարեն և ոչ այլ նոր ուսանել »։ Եւնաց Նիւմփայք այլ անմահ չէին, բայց շատ երկարակեացք. իսկ գիտութիւնը թուի թէ Մոսայից թողած էին, և իրենք յերկինս և յերկրի և ի ծովու, ասոնց ամեն մասանց վրայ յատուկ զատ զատ զատուած՝ իշխելով և պահելով, նաեւ ի գոլիս, զուարճութեամբ ապրէին. Հայոց Յաւերժարսն միանգամայն Մոսաս և Նիւմփայ էր։

Գ. ՋԱՐ ՈԳՐԻ. — Հեթանոսութեան ա մենէն մեծ ֆեան էր և է՝ Աստուծոյ սէր չունենալն, որոյ տեղ վախն բռնէր և զերի կ'ընէր զմիտք և զսիրտ. անկէ տեսանք կերպ կերպ պաշտելի նիւթեր և էակներ ճանչ

ցումք. որոցմէ աւելի և յատուկ են կարծե-  
ցեալ ոգեղէն կամ խառն էակք, որոց բա-  
րիներն այլ նոյնպէս տեսանք՝ ոչ անխառն ի  
չարութենէ. իսկ բուն Չար կոչուածքն աւելի  
շատ են. արժանի պատուհաս աստուածութեաց  
կամ աստուածանցէտ մարդկան, որք իրենց  
մոլորութեան և անառակութեան պատիժն ի-  
րենց իտոտրնակ խզնով ծնած և մնուցած  
են: — Թողլով փիլիսոփայից և աստուա-  
ծարանից՝ չարեաց սկզբան ինդիւրը, ըսենք  
նախ, որ ոչ միայն իրեւ ածական գէշութեան  
նշանակ է Չար կոչումն, այլ իրեւ գոյական  
և էական այլ՝ մեր լեզուաւ Չար կոչուին  
բարւոյ հակառակ ողիքն. որոց գլխաւորն և  
շատ չարեաց առիթ է գրգռիչ՝ է Սատանայ:  
Յայտ է որ այս բառս հրէարէն է և հին  
Հայոց հաւանօրէն անծանօթ. բայց թէ ոչ  
անունն՝ իմաստն հաւանական, եթէ Պարսից  
սէս Հայաւան ևս կամ Ահրէմէն չէին կոչեր  
կամ այլ ինչ, թուի թէ յատկապէս Չարն  
կոչէին, ինչպէս հիմայ այլ կոչուի ի հին և ի  
նոր քրիստոնէական դարածա, իբրեւ սկզբը-  
նապատճառ ամենայն չարեաց. նա եւ յոգ-  
նակի գրուած կայ Չարդ, վերջոյնեալ աղօ-  
թից մէջ ճ՝ ճիւղաց և նմանեաց հետ,  
« Որք ներարնակ ունին յինքեանս զմուտ  
չարութեան », կ'ըսէ աղօթողն<sup>1</sup>:

Աւելի յատուկ և ծանօթագոյն անուն չա-  
րաց՝ յայտ է ամենուս մեր լեզուի մէջ Դեւն,  
որ թէ և նոյն համարի ընդ աստանայի՝ ի  
խօսս, բայց սա անոնց գլխաւորն է իբրեւ  
իրեն պաշտօնէից և իշխան Դիւաց կոչի.  
Գրիստոս Տէրն մեր այլ որոշելով ըսաւ,  
« Սատանայի և հրեշտակաց նորա ».

Հրեայք Բենդզերուղ կոչէին յանուն Փղշա-  
ցուց չաստուածոյն, իբր տէր աղոթելութեանց,  
Աղթարք Բիէղզերուղան գրեն: Գիտեմք մեք ի  
Ս. Գրոց ի՞նչ և ուստի են Սատանայ և Դեւք.  
Իսկ մեր հին հարկ գործածէին այս ետքի բառս,  
և ուստի՝ կարծէին զիւայ ծագումն, չեմք զի-  
ստեր. յայտինն այս է, որ մերոց մօտ և ծանօթ  
ազգաց մէջ այլ այդ չար ոգուց անուան սկզբը-  
նաստան նոյն է, դ, ծ. Յ. Ժ. Ժ. Ժ. Teufel  
գերմ. — Diabolus, Diable, իսկ պարսկերէն  
տիվ և զանպիւրէն Դաիվա նման մերոյս, որով  
գուշակուի և նոյն հաստք: Չարմանալին այս  
է՝ որ նոյն և մի անուն՝ բարորոյն հակառակ  
նշանակէ շատ ազգաց մէջ, իբրեւ երկու դի-  
մաղմէ խումբ բաժնուած՝ զիրար ասող. մեր  
և Պարսից մէջ Դեւ կոչուածն՝ Հնդկաց, Յու-  
նաց, Լատինաց գերագոյն աստուածն է, Տե-  
վաս, Ջեւս, Թէոս, Deus կոչմամբ. զուգէ  
այսոր հակառակ Պարսից Ահուրա գերագոյն  
անունն այլ՝ առ Հնդկիս Ասուրա փոխուած  
նշանակէ Այս, որ է օրեղէն կամ հովու Դեւ:  
Ս. Գրոց և քրիստոնէութեան ցուցած սկզբ-  
բան մօտենան մեր հեթանոսք՝ զՀրեշտակի  
և զԴեւ և կոչմամբ նման համարելով, երբ  
բարի և չար կ'ըսեն երկուքին համար այլ:  
Պարսից աղանդն յիշէ այլեւայլ անուններ զի-  
ւաց. հաւանօրէն մերայոց մէջ այլ կար զա-  
նազանութիւն, և ամէն մէկն տեսակ մի  
չարեաց պատճառ համարուէր, ոչ միայն մեծ  
պատահարաց, ցաւոց և վնասոց, այլ ինչուան  
և յօրանջելոյ և ձկտելոյ և յուրոց հանելոյ,  
կ'ըսէ Եղեթիկ: Տարբապաշտութեան մէջ յիշե-  
ցինք Պաշտաւոյ և Նշըրկու դիւանքն. բայց յի-  
ստին ըստ մեր Թէկուրանցի սրբազան գուսանին.

<sup>1</sup> Աւելի խարդախ և բարին աւրող ապական-  
նող զգի յայտնուի Չարն իր գործովք. ինչպէս  
Տեսաւն մերոյ Գրիստոսի առականց մէջ. երբ  
Սերմանացանն արքայութեան սերմանքը ցանէ,  
« գայ Չարն և յափտակէ գտնմաննայն ի  
« սիրտ »: Եւրիշ անգամ երբ բարի սերմն ցանէ  
յուզարակին, կու գայ թշնամին « և ցանեաց ի  
« վերայ որումն ի մէջ ցորենոյն և գնաց... և Ո-  
« րումն որդիք Չարին են »: (Մարկ. ԺԳ. 19.  
25. 38). — Թէ և Ժիծաղական՝ բայց այս բա-  
ցատրութեան յարմար է վանական վի. գրոցն,  
իբր իր օրերուն հանգիստած. « Եղեւ ի վանք ի  
« Խլաթայ Ժովուն եղերն, ուր տարգիլ բոյն

« եղիք. Չարդ ի ներս ձու էած յայն Ժամն որ  
« արագիւն չէր ի մօտ. նա զհետ իւրոյն թխեաց  
« և ձագ հնան. արուն՝ ետես և խառմեաց. գը-  
« նաց և երբ 200 սպիտակի արագիլ և մին սեւ.  
« և որպէս գրատաւար նստան զուրկն երեք օր.  
« և սեւն ի բոյնն զձագն յուտուն միանգամ ի  
« ի վեր ունէր կտցովն և ցուցանէր, որպէս թէ  
« ասել, Չայս ինչ ես արարեալ. ապա ի վերայ  
« եկեալ սպանին, և ծայր ծայր ցրուեցին զինքն  
« և զբոյն իւր, և զարուն առեալ գնացին »: —  
Թէ որ Թոնոց այլ յարուբիւն ըլլար, կ'ըսէ  
Վարդապետն, վարձք կ'առնուր այս անպարտ  
մեռածն այլ Չարին խարդախութեամբ:

« Ի՞նչ ընտուղ ? Կու տաս՝ Թուրքութեանցի խեւ. Խիւղացդ ես թեթեւ քան զհրըրկու բեռ » ,

համարեցանք որ ըլլար բեռ Թուրքու, և ոչ չար ոգի մի : — Չարն ու Դեւ միացեալ՝ Չարացեալ այլ կոչուած է ի դիրս մեր. ինչպէս Եղիշէ կ'ըսէ. « Իբրեւ զՉարագեւ մի ոչ դաւարբեր յուզել և շարժել զբուր ձմերայնոյ » , նման նմին քաղցրաբան Շնորհալին այլ .

« Սաստեա և իմ՝ Չարագեւին ,  
Որպէս եւ յայնժամ ըզնոսին » :

Յիշեն ժամանէրք մեր իր երկու տողն այլ ճաշու (Չ. ժամու) աղօթից մէջ .

« Հերքեա ի մէնը ըզժանրութիւն  
Շրջող դէռիս միջօրէի » .

հետեւելով իր և մեր հնագոյն Հարց աղօթից՝ նոյն (Չ) ժամու, որոյ քարոզն ազդէ ազատութիւն « յամենայն հրեղէն նետից սա. » տանայի՝ որ Թուրքի ի տոռէ . « աղօթողն այլ մաղթէ ազատիլ « ի զայնթակղութենէ դիւրին ի հասարակ առար » . ամենքն ալ թեւադրեալ նոյն ժամուն սահմանուած (Խ) Սաղմոսին տունէն . « Ոչ երկիցես զու յերկիւղէ գիշերի, և ոչ ի Նետէ որ քայլ ի տոռէ » : Ըստ այսմ՝ ենթադրուի թէ յատուկ գեւ մի կար կէս օր ատեն շրջելով և թռչելով, փորձող զմարդիկ, և համեմատ նոյն ժամուն տաքութեան հրեղէն նետերով խոցելով : — Այսպիսի նետահարութեան անյարմար չէր և Պարսառու դեռն, զոր յիշէ վերայգրեալ Վասակոս Վ. և զնոյն համարի Բահաղ և Մոհրըր, և Հոնմփա Մովսարացոց և Ճանձիկ կամ Ճամնիկոյ Ակկարանի, այլեւայլ կերպարանք : Աղթարաց մէջ յիշուին քանի մի անուամբ դեւք, բայց հի՛ն աւանդութիւն է՝ թէ զորդքն հնարած են, յայտնի չէ. ինչպէս, Վշտիկ՝ զահիճ գեւ, զոր Սողոմոն 5000 բռներ կապեր է. — « Սիբադե, որ նստի ի տան անկեալ » « Գիշերակի դեւ, որ լի. » նիս ի կերպս ճանձից և նստիս ի վերայ բը. » դանցն <sup>1</sup> և զարնուցանես սեւ » : Ուրիշ Պահ.

պանակաց մէջ այլ յիշուին աւելի օտար անուամբք, Էնեդար, Նոփիազ, Խդասեդ, և այլն :

Չար բառին համանիշ է մեր լեզուին մէջ Վատ բառն, որ և զոյական իմաստիւ նոյն պէս նշանակէ և տեսակ մի չար ոգի, զատ գրուած վերայիշեալ աղօթից մէջ. Վատ՝ որ և Էդուպատ՝ Պարսից դենին մէջ յատուկ անուն է դեւի միոյ, նոյնպէս և հրեշտակի մի, որ ամենց մէկ աւուր պահապան է. երբ կուքն այլ հովերու իշխող, մէկն բարոյ միւսն չարի. նոյն չարն պարզապէս հովու անուամբ մերայոց այլ ճանչցուած է, ինչպէս նախայիշեալ օտար պատմութեան մէջ ըսուածն. « Չէ դեւ, այլ Հոգմն դիպաս քեզ » : Ըստ գրոց՝ այդ հոգմն և իր չար փշոզն՝ կուռի Այս. հովէն զարնուողն այլ Այսահար, որ գրեթէ նոյն է ընդ Դիւահարի, ինչպէս վկայէ Եղ. նիկ. « Ի մեր լեզու Այսահար ասեմք, որ. » պէս և խորանայ հարցն մերոց ստաշնոց՝ » ըստ օտարութեան ի մեզ կարգելոյ. այլ » գիտեմք՝ եթէ Այսահար է, և հոգմն ոգի... » յորժամ ասեմք թէ սիբ շնէ, Ասորնայք. » ասեն՝ թէ Այս շնէ է » : Ուրիշ տեղ այլ յիշելով ռավկաց անտոի կարծիքները՝ կ'ըսէ. « Փնէլէն և լեզուին կծել, և ունկանն հար. » կանել, և բարանին կծել, ոչ եթէ յԱյսոյ » իմեքէ լինի, այլ ի բնական ազդեցութենէ » անտի՝ զոր տնկեալ է Այսարչին յանդամ » սըն. — Ըստ անուան և իմաստին՝ Այսք յարմարին Հնդկաց Ասորաս կոչելոց, որք են օղեղէն և շոգեղէն այսք՝ արեգական հակառակք. բարի հոգմերը Մարտա կոչեն, որ հակառակօրէն մեր Մրրիկ բառի մօտենայ :

Դիւաց և Սատանայի յարմարացած անունները, ինչպէս Բանսարկոս, Բեշիար, և այլն, քրիստոնէական գաղափարաց արգասիք համարելով՝ թողումք ի բաց, միայն յիշենք նորանշան անուն մի՝ որով կոչեն զՎաստան՝ վանական վար. և իր աշակերտն Վարդան և Յովհան Եղնկացի, այն է Սոսանակա, որ Թուրքարէն լրնձուրտ նշանակէ. ի՛նչ և ո՞ր ազգի և լեզուի աւանդութենէ առաջ եկած ըլլալն յայտնի չէ ինձ, այլ մեր մասնահարաց քով քոնելով՝ կարծեօք միայն կրնամք՝ թէ ոչ ազգային այլ յազգայնոց ընդունուած համարիլ, և սպասեմք անդեկա.

<sup>1</sup> Գուցէ պիտի ըլլար քրդական, բուրգերու : Բայց քար այլ յիշուած է :

նալ ի գիտնոց. միայն՝ առջի յիշածներէս, այսինքն դիւաց կերպ ի կերպ երեւնալէն, օտար չէ՝ որ այս մեծ և անճոռնի կենդանւոյն կերպարանքով այլ երեւցած կարծուի չաբողեն այն կամ գլխաւորն Դիւաց: — Քննենք հիմայ զօտոնք պէտպէս անուամբք և տեսեալմբք:

Թուխը և խածք. — Առաջինն թուի զբազնատական կրօնից մէջ յիշեալ բազմապատիկ դիւաց մէկն կամ մէկ տեսակն, որ կոչուի Տոսիս. հայերէն անունն միւսոյն հետ յիշուելով՝ զոյներով զանազանեալ տեսակներ կարծեցընէ, և ոչ միայն խոր խաւարի բնակիչ, այլ և բոլորովին զրկեալ ի լուսոյ կամ կոյր. ասոր նման և երկրորդն. զայս ենթադրեմք շատ հեղ յիշուած ազօթից խօսքերէն. « Ակն խածիցն ճաղեցին (ճաթին), և ոչ տեսողաց թիւիցն՝ պատառեցին, և սոցունց » համաբարակ Չարացն սիրտ և կամբ՝ սու. » զեւրէ՝ բռնեռամբ՝ յանդունդս ընկճեցի, » ընդ սկզբնաշար Չարին բերլարայ »: Խաժակն (կապոյտաշուի) գեւը՝ տեսող համարելով՝ խնդրէ որ աչքը ճաթի, իսկ միւսը՝ ոչ տեսող, սակայն և այնպէս կ'ուզէ որ կոյր աչքն այլ պատառուի:

Դրուժք. — Պարսից կամ մոզուց կրօնից մէջ յիշուի Դրուսիս և Տերուս. մեր լեզուին մէջ հասարակ բառք են Դրուժ և Դրուժան, բայց և ի դասս Դիւաց կարգեալ են. հին բառգիրք զԴրուժ մեկնէ « Դիւ վնաւին »: ուրիշ գրուածոյ մէջ այլ ըսուած է. « Ո՛վ Չարագիւ Դրուժան այր, թշնամի ար. » զարուժեան »: Յայտ է որ զրօնէլ, զրժանք՝ խաբէութիւն, մատնութիւն նշանակին, որով և Դրուժք համանիշ են խաբէրաց կոչման դիւաց կամ սատանայի: — Թերեւս այս անուն ի Դիւր և ոչ արմատոց բարդեալ է. եղբինիս իմաստն յայտնի է, առաջին առաջնաբան (Դիւր) յիշուի դեւ մի յաղանդն Պարսից. առ մեզ այլ Տիր՝ Միծ ոյժ և բռնութիւն նշանակէ. հին փերականի մեկնիչն այլ՝ վնասակար թարգմանէ: Օտար լեզուաց մէջ այլ այս նշանիս զուգին և ի մասսանք. ինչպէս, Լ. Dirus, ֆռ. Dur, Դիւնայ, խիստ. Tirannus՝ բռնաւոր. Տրիստ Դիւպեթաց չար ոգիներ են. և այլն:

Կըրնայ երկու դիւական անուանց այլ (Խածք և Դրուժք) ուրիշ արմատ համարուի սովորաբար իբր անկարգ բան և մարդիկ ըսուած Խոռժ և Դոռժն, ուսկից միւս հասարակ բառերն (Խուժան, Դրուժան, Դիւնէ, Դիւնիկ, Դիւնդակ, և այլն)։ Բառերս և վերի ըսուածքն Խած և Թուխ՝ չարացք դիւաց համար՝ յիշեցընեն Երուանդ բռնաւոր թագաւորի համար վիպասանից հմայական զրոյցը, զոր այսպէս ամփոփէ Խորենացի (Բ, ԽԲ). « Ասեն զԵրուանդայ՝ ըստ հմայից դժնեայ » զոյով ակնան հայեցուածով. վասն որոյ ընդ » այգանալ աշայրջացն՝ սովորութիւն ունել » սպասաւորացն արքունի՝ վէմն որճաքարեայս » ունել ընդդէմ Երուանդայ, և ի հայեցուա » ծոցն դժնաբերեմէ ասեն պայթել որճաքար » վիմացն։ Բայց այս կամ եղիցի սուտ և » առասպել, և կամ դիւական ինչ առ իւր » ունել զօրութիւնս, զի այսպէս հայեցուա » ծոցն անուամբ ? վնասեացք զորս կամի »: Այս բանս կըրնայ պարզել մեր ազօթոյին խնդիրքն այլ:

Շիւալը. — Այսոնք ոչ աչաց՝ այլ մտաց կուրացուցիչ դեւք էին, այսինքն խելագարող, խենթեցընող, ինչպէս յիշեցինք Արտաւազդայ համար. սոյն անուամբ խելագարն այլ Շիւալ կոչուի. ինչպէս կ'ըսէ վնասական վ. Խորենացոյ պատմածին տեղ (Բ, ԿԱ) այդ թագաւորին համար, « Ի մանկութենէ բա » խած, զոր Շիւալ կոչէին ». և Յայսմաւորաց մէջ յատուկ անուն դարձած է. Գրիգոր Մագիստրոս բառախաղութեամբ կ'ըսէ, « Շուպտական Շիւալացն շարս շամանդա » դեալ՝ շահանան ի վերայ մեր »: Բախեցիքեղ մտածող, խօսող և զորժող իմացներով:

Ճիւալը. — Յիշեցինք զայս ի կարգի Հրեշից, և զայն եւս՝ թէ սոյն անուամբ կոչուին և ոգեղէն էակք կամ դաս մի դիւաց, յերազի կամ յարթութեան վախեցընողք այլ լանդակ կերպարանօք. այս իմաստով հասարակ խօսից մէջ ճիւալ կ'ըսուին՝ վայրենի կենդանիք և մարդիկ, նաեւ անպիտանք և փրցունք. այս պէտպէս մաքբրով ըսած են, Գր. Մագիստրոս « Որպէս ճիւալանցն է ճարակ » ճոռուղի ի գիշերի յանկողինսն ». Սարգիս վ. (ի Մեկն. Յակոբայ, Ե), « Դիւացն

» Ճիւղազաց ճարակոզաց զիս ակտիւք »։ Ուրիշ տեղ այլ, « Ճիւղազ, փցուն, շահասէր վաճառական »։ Ռամկորէն ձրաձրանդ կոչուի նիւհար տկար անձն։ Յիշեցինք մեր աղօթնողին խնդրածքն այլ, « Մաղթեմք ի քէն բանտ կանքս, մի՛ ի Ճիւղազացն իշխել »։ Ասոնց մէջ նշանելի է Մաղիստորոսի բռնածն, որ եւրագի երեւոյթ յայտնէ, և ուրիշ տեղ ակելի պարզ կ'ըսէ. « Որ առ երազօքն է Ճուղաշանցն »։ Հին բառգիրքը՝ Դեռ նկարական բացատրեն զՃիւղազ։

Թպղա կամ Թեպղա կամ Թեպղ — Նորայուր և հայ ակընջի խորթ անուն մի լրտուի, (եթէ այսպիսի դիւական և դիւթական



Թպղա.

հնարից մէջ ամեն բան այլ խորթ չէ). Թէ և չեմ կարծեր նոյն ծագմամբ՝ բայց տառադարձութեամբ նման է Յունաց Ծեօβουλη անուան, որ ըստ իմաստին՝ աստուածականք նշանակէ, և ըստ առասպելին՝ էր Հեփեսոսեայ սիրականն և մայր Միլարիսոսի։ Մեր աղթարական գրութեան մէջ Թպղայն յիշուի միայն յետագայ չար և ահարկու ոգւոյ հետ, որ է

Ա կամ Ալք. — Իբր հասարակ բառ՝ Ալք նշանակին խոր անգուանք, իբր անգունք, և համաձայնին Գոթաց, Գերմանաց և համալեւ-

զուաց՝ Hell բառին որ նշանակէ Դժոխք. ի հիւսիսայնոց Դժոխոց Դիցուհին այլ Հէյ կոչուէր յարմար բնակութեան Ալից, որք և խոնաւ տեղերում կենային, և ակելի ֆնասէին կաւնանց ծննդաբերութեան և զաւակաց. իբրեւ Թէ հակառակորդք ըլլային անոնց բարեկամ Յաւերժահարանց։ Այնպիսի Ողիներ են կ'ըսէ Գր. Տաթեւացի բարոյախառն, « որք ի » ջուր և ի ծնունդ կանանցն՝ Ալք կոչե » ցան. զի զէջ ակտիւն՝ զհոգիս կորուսա » նեն, և ի ծնունդս՝ զմարմինս և զհոգիս »։ Այսպիսի մեծ ֆնասու դեմ աղթարք այլեւ այլ հմայական և պահպանողական աղօթքներ գրած և նկարած են զայն. որպէս հետեւեալ բանս « Սուրբն Սիսիանոս գայր ի լեռնէ » ի վայր, և տեսաւ պնդծ մի լար. և ունէր » աչք հրեղէն, և ի ձեռին երկարի կտրոց, » և հանդիպեցաւ ի անդի աւազոյ. ասէ Ս. » Սիսիանոս. Ո՛ր երթաս, նգոված պնդծ. — » պատասխանի ետ » նմա և ասէ. Եր » թամ զմանկունս » կանանցն թառա » մեցուցանեմ, ըզ » կաթնպակասեցու » ցանեմ, զաչսն խա » ւարեցուցանեմ. » զըղեղն ծծեմ, և » համր առնեմ, և » առնեմ զտղայն » անծամանակ յո » բովայնին », և » այլն։ Ուրիշ մ'այլ. » Ալն չար և Դժնիկ կենդանին » կոչելով՝

գրէ այսոր բերնով.

« Էս եմ Ալն չար, որ կորուսանեմ զմանուկն » ի յորովայնի մօրն »։ Ալելի ետ պատմէ ուրիշ մի. Սուրբք ոմանք որսի կ'երթային, « առին » զձայն երեխային. գնացին և տեսին զԱլն ի » չարութեան. բռնեցին կալան և կապեցին » զԱլն ի յԱլին վիւն ? եկեալ մայրն Ալին և » ասէ, Այս ի՞նչ իցէ, այս ի՞նչ։ Ասեն. այս է » որ մասնէք ի մօրն յորովայնի. զերեւ » իային զվիսն ուտէք, զարիւնն խմէք, ըզ » լոյս աչացն խաւար դարձուցանեք։ Առէ



Ալք.

» մայրն Ալին. թողէք զանդրանիկ որդին  
 » իմ՝ յոր տուն որ ձեր անուանքն լինի՝ անդ  
 » ոչ մերձենամք ի ծառայն Աստուծոյ », և  
 այլն : Ուրիշ մի նկարագրէ զԱլն. « Այբ մի  
 » նստեալ ի վերայ աւաղու, և մագն նորա  
 » իբրեւ զօձի, և ըղռնէն նորա պղնձի, և  
 » ատամունքն նորա երկաթի, և ժանիքն  
 » նորա որպէս վարազ խոզի. (որ և կ'ըսէ).  
 » Նստիմ' ի վերայ տղացկանի, գականջն  
 » խորովեցուցանեմ', զդասապն (լեարդն)  
 » քարշեմ', և խեղդեմ' զմայր և զմանուկն.  
 » մեր կերակուրքն ժօրն տղայոցն մին է և  
 » տղացկանի դասապն, և եօթն ամսոյ մանուկն  
 » զողանամք ի մօրէն, խուլ և մունճ տա-  
 » նիմք առ թագաւորն մեր յանդունդս : Եւ  
 » մեր բնակութիւն յանկիւնս տանն է և  
 » յախտոռնն անանտոց... Եւ Սուրբն հա-  
 » նին զհրեղէն սուրն և կամեցան օպանա-  
 » նել զՊեղծն », և այլն. բայց իր աղա-  
 » շանաց խնայելով կ'երգուրնցնեն որ մէկու մի  
 շնասեն այն տուներու մէջ՝ ուր իրենց ա-  
 նուան աղօթեն : Նշանաւոր է վերի գրուա-  
 ծին մէջ Ալի մայր և իրեն պաշտպան ու-  
 նենալն : — Ալի նման աւանդութիւն մի  
 այլ Գերմանացիք ունին, որ կարծեն թէ  
 իրենց հին Դիցուհին Հոլտա՝ կու յափշտակէ  
 անխնայք մեռած երախաները, և երբ մայ-  
 րերն՝ ցուրտ գիշերուան հովու ձայնը լսեն կար-  
 ծեն իրենց զաւակաց ճիւղ և գուրգուրան :  
 Մոգուց աղանդն այլ պիղծ և պժգալի հա-  
 մարէր բնական ալքը, այսինքն երկրիս վը-  
 րայի ծակտիքը, վիհերը, իբր թէ զօսիտց  
 և դիւաց ելումուտը ըլլային. ասոնց նման կ'ե-  
 րեւի մեր հեթանոս և թերահաւատ ազգայ-  
 նոց այլ Անքնակ տեղիքը ըսածն, ոչ իբր  
 սոսկ բնական տեղիք, այլ իբր անձնաւոր կամ  
 դիւաբնակ և չարաբուդիս. զայս կ'իմացընէ  
 միւս ոգիներէն վախցող աղօթականն. « Եւ  
 » կամ յԱնքնակ տեղոցն ցաւոցն՝ մտանել  
 » նեղել կամ զկծել մի՛ իշխեսցէ » : —  
 Հայկական Ալք՝ այսպէս յոգնակի ձայնիւ  
 ծանօթ է և Քրդաց, նոյն աւանդութեամբ  
 կանանց զաւակաց ֆեստելուն. այնպէս որ երբ  
 Գուրգն բարկանայ և անիծէ կին մի՝ Ալքն  
 աղիքդ կրծէ՛, կ'ըսէ :

Գրող. Առնակ. — Ինչուան հեմայ իբր

հասարակաց հաւատք է նաեւ քրիստոնէից  
 մէջ, թէ մահուան հրեշտակ մի կ'առնու  
 օրհատականաց հոգին. և այս ցանկալի իսկ  
 է բարեպաշտից, ըստ որում և մեր Շնորհալի  
 հայրապետն խնդրէ յԱստուծոյ՝ Հրեշտակի  
 քարտոյ յանձն առնել՝ իր հոգին, այսպէս և  
 այլք. բայց սորա բարի հրեշտակ ճանչնան և  
 խնդրեն. իսկ թերահաւատք և անհաւատքը՝  
 Հրեշտակ չար գիտէին և վախնային, զոր  
 հիմայ Գրող կ'ըսեն Սա ըստ ամենց իբր հոգ-  
 ւոց գործերը գող է, որ պիտի կարդացուի Աս-  
 տուծոյ դատաստանին. ըստ այլոց՝ հոգիները  
 կրող և տանող. « Սովորութիւն է ախտացե-  
 լոց, կ'ըսէ Գր. Աստուածաբանի հատից մեկ-  
 » նիւ մի, որ ամբաստանեն զմահն, զՀրեշ-  
 » տակն՝ որ Գրող ասեն. Անիրաւ է դա-  
 » տաստանդ. բռնութեամբ տանիք », և երբ  
 հիւանդն զառանցելով բարբառնի՝ կարծեն թէ  
 այն Գրողին կամ հրեշտակին հետ խօսի. Աղ-  
 թարք այլ պատուիրեն, թէ « Ով որ զԳրողն  
 » տեսնէ՝ որ զիր հոգին առնուլ լինի, և  
 » ինքն ի հոգեւէլարք լինի ի յերազին, յայն-  
 » ժամ մեղայ ասել պիտի » : Այսպիսի յի-  
 շատակք՝ բարի կամ Աստուծոյ պաշտօնեայ  
 ցուցընեն զԳրողն. անոր համար և մեղք  
 համարին՝ « Որ հայոյէ զԳրողն և զԱս-  
 տուած » : իսկ անիծողքն՝ կրողն տանի ըզ-  
 քեզ, ըսելով, չար կարծիք յայսնեն : —  
 Ո՛ր տեսակն արդեօք կ'իմանայր գուսանն՝  
 երբ իր սիրականին կ'ըսէ. « Այն քաղաքն  
 ուր դու մտնուս՝ Գրողի ձայն չըհասնի » : —  
 վախկոտ ռամիկն կարծէ՝ թէ ոչ միայն օր-  
 հասականին ճարն կու հասնի, հապա և ա-  
 նոնց՝ որոց վրայ կոխէ հոգեպահանջ հրեշ-  
 տակն կամ Գրողն, և այսպիսիք կ'ըսուին  
 Հրեշտակակոխք :

Որչափ այլ նոր և ներկայ ժամանակի հա-  
 ւատք են այսպիսի բանք, անտարակոյս է՝  
 որ հեթանոսութեան մատն և մնացորդ այլ  
 կայ. այն հին ժամանակ հաւանորէն բաց ի  
 Քաջաց և նմանեաց՝ կայր և հոգեհան ոգի  
 մի, Առնակ կոչուած. այս առնուս լսուի Պրո-  
 խորն գրաց մէջ, որ է առասպելախառն պատ-  
 մութիւն Յովհ. Աւետարանի. յորում կի-  
 նոպաս կախարդ՝ կ'ըսէ. « Առաքեմ Առնակ  
 » չար ի տուն՝ յորում է, և պահանջիմ' զհոգի

» նորա ի նմանէ » . քիչ մի վերջը նոյնը կրկնելով դիւի բերնով՝ կ'ըստի, « Առաքեմ » ճրնչապէս լար, և պահանջեմ՝ զոգի նորա ի » նմանէ » : Եթէ ուրիշ աւանդութենէ ծագած չէ այս անունն, որ լսուի հին Հայկազն նաւասպետաց մէջ այլ, Կրողի պէս՝ առողջ նըշանակէ. և ինչ որ է՝ մի և նոյն են Առնակն և Կրողն կամ Գրողն և Հրեշտակն չար :

Խալիլի կամ Խալիլիկ . — Երանօթ է այս անունն ի խօսս, պէսպէս մտօք, և սովորաբար կ'իմացուի փռանկաց Cauchemar ըսածն, որ աւելի հիւանդութեանց կարգի պէտք է դրուիլ, զի կարճատես նեղութիւն կամ ճնշում մ'է կըրծոց՝ քննոյ ատեն, ուսկից արթննալով դեռ կիսաքունն երազախառն, կարծէ՛ թէ վրան ծանրոց մի կայ, կամ աւելի երազելով և վախնալով՝ ոչ իր այլ ուրիշ անձ մի կարծէ զինքը ճնշողն . հասարակօրէն Միջնաշունչ կ'ըստի այս բանն : Մինչեւ այս կէտս կրօնական բան մի չկայ . սակայն՝ թէ՛ Խալիլի անունն (որոյ բուն իմաստս յայտնի չէ) և թէ՛ զբաւոր յիշատակք ինչ՝ կ'իմացընեն, որ վերոյիշեալ քանի մի չար ոգեղանաց նման բան մի համարած են հիներն, և թերեւս հիմայ այլ . վասն զի շատ անգամ յիշեալ աղօթից մէջ յիշուի և պահպանութիւն « ի ծանրութենէ Խալիլկաց » : Բժշկարանք մեր ուրիշ հիւանդութեանց հասասոր յիշեն և գրեն պարզապէս . ինչպէս անոնց մէկն գրէ . « Քնապոռս . որ է խըպըլիկն <sup>2</sup> », որ գիշերն ի քնուն մէջն լինի մարդոյ » . և պատճառն կ'ըլլայ ի տաքէ և ի հովէ . « Նշան որ տաքէ լինի՝ այն է, որ » երեսնայ զոյնն կարմիր լինի և շատ քուն » լինայ, և գիտենայ թէ մէկ ծանր իրը—մն » ի վերան ընկել է և կամ ծանր իրը—մն » ի վերան ծածկած է, և այլն... Յեղ—մն » (այլ) Խալիլ լինի, որ ի պիղծ խլտէ և » պոխարէ լինի՝ և այն շուտ ողջանայ », և այլն . թէ տաքէ թէ պղտէ պատճառած

1. Այս բառս այլ քննութեան կարօտի, առջի մասն Միջնաշունչ, հեղձամիջոց լինելը յայտնէ, ետքինն անյայտ է :

2. Ուրիշ մի գրէ « Քապուն » Խալիլ ցաւն է » :

Խալիլիկն գեղերն այլ գրելէն ետեւ, կ'աւելցընէ . « Եւ Աստուած պահէ զքեզ ի խըպլիկ ցաւուն, եղբայր . ամէն » :

Հադիւսմ . — Այս անունն այլ յիշուի տեղ մի Խալիլիկի, Պայից, Պարկաց և Շիդարի հետ, բայց ի՞նչ ըլլալն կամ կարծուիլն բացատրած չէ, և ուրիշ տեղ այլ չեմ լսած կամ գտած . անուան ստուգագրութեանն այլ տարակուսիմ, վասն զի չի նմանիր միւս հայկական անուանց :

Յետ այս ամենայն չար ոգւոց՝ չեմ ուզեր դուրս թողուլ մէկ զարմանալի էակ կամ դեռ էանալի մի, որ աննման ոմն է, և ի քրիստոնէութեան յիշուած անունն առ մեզ՝ է Նեան . ծանօթ է հաւատացեալոց՝ որ սա նշանակէ զգերաբարիստոս, թէ ոչ դեւ՝ այլ զիւլաշունչ անձ մի, որ պիտի գայ նախ քան զկատարած աշխարհի՝ խաբէլ զմարդիկ և զինքն Քրիստոս կարծեցընել . ինչպէս արդէն եկած են այսպիսի խաբեցայ Նեոխը կ'ըսէ, Յովհաննէս աւետարանի <sup>3</sup>, որոյ գրութեանց մէջ միայն յիշուի սա, և յոմանց՝ անուանն մեր . ձառորութենէ՝ կարծեցեալ Ներոն կայսրն : Բայց այս իմաստիւ Նեոնի ինդիրն, մեր գործոյ չի վերաբերիր, այլ ոգի կարծեօք միայն՝ որ այս անուամբ . չար ոգի մի ճանցուած պիտի ըլլայ առ Հայս՝ հին ատեն, և մեր թարգմանիչք այնով կոչած են զգերաբարիստոսն, որպէս կոչեն ուրիշ ազգք և լեզուք, և մերին նման անուն չունին : Չար ոգւոյ

3. Այս սուրբ Աւետարանիչս իր Յայտնութեան հրաշալի գրքը մէջ նկարագրէ զիւսկիր Փազան մի (Պէ. ծգ. 18) որ համարի Նեոն, և կ'ըսէ վերը . « Եւ թիւ անուան նորա է այս, 666 » : Շատք աշխատեի են այս թուերը այբուբենի վերածելով՝ գտնել անուն մի Նեոն նշանակող, ոմանք համարին զսա Տիտան կոչուած յունարէն (Τίταν) իբր հսկայ և արեւ, և ըստ տառից աւուանն գումարեն այդ թիւը .

|   |     |
|---|-----|
| T | 300 |
| Ϟ | 6   |
| Ϛ | 10  |
| Ϝ | 300 |
| ϝ | 1   |
| Ϟ | 80  |

666

նշանակութիւնն գուշակուի և միջին դարուց վարդապետի մի՝ չարագործ մարդկան համար Նեանագործ ըսելէն։ Օտարաց մէջ այս առնուան նմանութիւն մի գտուի հիսիսային Գերմանացւոց քով, Նոռն, Nornes, որով կ'իմանային երեք վիճակ յատուկ առանձին անուամբ, երկրիս կենդրոնում կանգնած, Հացի ծառի մի արմատին տակ, և Յունաց

Պարկայից պէս զրէին մարդկան բաղդը մէկն՝ զնեղիայն, միւսն, զանցեալն, երրորդն այլ զապագայն։ — հեռաւոր նմանութիւն մի Առնակի անուան և զործոյ։ Նոր հետաքննիչ բեւեռագրաց՝ համարին Նեռ անուն մի կարգալ, իրրեւ դժոխական յատուած մի։ Բայց զատնը բաւական չեմք համարիր մեր Նեռն անունը ստուգարանելու։

(Շարայարեղի)

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՍԱՑՈՒՄԻՐ

Որչափ ինչ որ մարդիկ կը համարին թէ գիտեն, այն իրենց չգիտցածին փոքրիկ մասն է։ մարդուս գիտութիւնն այնչափ խառն է սխալանաց հետ՝ որ կարելի է ըսել թէ չի գիտեր՝ քան թէ գիտէ։

Տեմիստիոս

Ընթեռնույն՝ ստուգիւ իմաստնոց հետ կենակցիլ մ'է, ընդ հակառակն աշխարհիս հետ կենակցիլն՝ գրեթէ յիմարաց հետ կենակցիլ մ'է։

Բակուն

Քիչ գիբք կը ծառայեն գիտութեան լաւ համբար մի պատրաստելու, սակայն կարեւոր է լաւ ընտրողութիւն և լաւ հանճար։

Սալվինի

Ոմանք այլ Անտեմոս (Αντεμος) զՆեռն, իրր հակառակող, և այս անուամբ այլ նոյնպէս գուժարեն։

|     |     |
|-----|-----|
| A   | 4   |
| ν   | 50  |
| τ   | 300 |
| ϖ   | 5   |
| μ   | 40  |
| ο   | 70  |
| ς   | 200 |
| 666 |     |

Ուրիշներ այլ ուրիշ անուններ յարմարցուցեր են։ Իսկ այլք եկեղեցւոյ և կրօնից հակառակող որ և է զօրաւոր մի, այլ եւ այլ ժամանակս՝ ինչ

Գրեթէ ամենայն հեղինակ նման են խայտաճամուկ վերաբերուի մի, որոյ գոյնն առնուած է աստի ու անտի, և որպէս զի անոնց գէշ չըսենք՝ հնարուքեան վայելուչ անունը գտած եմք, անոնց փոքրիկ գողութիւնները ծածկելու համար։

Գոծծի

Սոսկ յիշողութեան հմտութիւնը, անկարգ կոյտ մ'է բարւոյն և վատին, ազնուին և նուաաստին որ մարդուս գլուխը կը լեցնէ, առանց միտքն ընդարձակելու, գիտունը կ'ընէ հարուստ ձեռագէտ մի անօգուտ բաներով, և աղքատ գաղափարներով։ մեծ՝ պզտիկ բաներու մէջ, և պզտիկ՝ մեծ բաներու մէջ։

Զիմներման

չուան և զմեծն Նարուլոն. Հռովմայ տիբելուն և զԱ. Պապն ի գերութիւն վարելուն համար, ասոր այլ անուան տառերով սկսուած յունարէն վնասակար նշանակութեամբ բառեր գտած են։ ոմանք այլ ժամանակին թիւը Նեռն անուան յարմարցունել ուզած են, որոյ պատշաճի ըստ դիպաց հայերէն տառից գումարն, բայց մենք կուճանչանք զՆարուլոն յանգուզն աշխարհակալ մի, այլ ոչ անբրիտանոնայ վարճենալ։

|      |      |
|------|------|
| Ն    | 400  |
| հ    | 8    |
| ա    | 1000 |
| ն    | 400  |
| 1808 |      |